

պատմելու համար էր քան թէ իրը: Ու այդ ցաւն ալ կը պատմէր զգուշ, հեգնելով, ծիծաղելի դրուագներ փնտուելով յաճախ: Իր քաշածները կը պատմէր աւելի զուարթ միջնադէպերու մէջէն, ու «հերոսի» կերպարանք չէր տար երբեք իրեն: Իր կեանքէն քաղած պատմութիւնները մարդ մը հեգնելու, կամ դէպք մը ծաղրելու համար էին աւելի: Բայց այս զուարթ մարդը այնպիսի լրջութեան վայրկեաններ ունէր՝ որ զինքը անտանելի կը դարձնէին: Ոչ կրնայիր հետը խօսիլ, եւ ոչ ալ համ կ'առնէիր իր խօսակցութենէն՝ եթէ նոյնիսկ հետդ խօսէր: Կ'այլափոխուէր Օտեանը: Կրանիթ մը, մոմիա մը կը դառնար: Ու չէիր հասկնար, թէ երգիծարան Օտեանին մէջ ինչպէ՞ս կ'ապրէր այս խստաբիր, խոժոռ մարդը: Ու դժուար չէր եղբակացնելը, թէ Օտեանի զուարթութիւնը յաճախ խորունկէն չէր դար, ու եթէ խորունկէն ալ դար՝ ցաւ մը, կսկիծ մը, յուզում մը աչքերէդ սքօղելու համար էր: Բայց ոչ ոք զիտցաւ այդ ցաւը, դիմակին տակի Օտեանը, ոչ իսկ իր մտերիմները:

Դեռ քանի մը օր առաջ Ֆրանսահայ Տարեգրքին մէջ կը հանդիպէի Օտեանի ամենէն մտէրիմ մարդոցմէն մէկուն՝ Լեւոն Բաշախանի սա քանի մը տողին, Օտեանի նուիրուած հակիրճ նօթերու մէջ:

«Թերեւս ինքը անոնցմէ էր, որ միշտ կը խնդան՝ իրենց արցունքը զսպելու համար, բայց ատիկա ոչ ոք չզիտցաւ, ոչ իսկ իր մտերիմները»:

Ու արդարեւ, ներքին տառապանքէ մը կուզային այդ ժպիտները, զգուշանալով տառապող մարդուն գաղտնիքը պատմել:

* * *

Ու Օտեանի հոգիին այս երկու ներհակ զիծերը կը նշմարէիր մանաւանդ Օտեանի երկու ներհակ վիճակներուն մէջ, — երբ խմած չէր ըլլար, ու երբ զինով էր: Արդէն հողին տակը հանգչող մարդու մը յիշատակը անպատուե՞լ է արդեօք ըսել, թէ Օտեան ալքոլամոլ մըն էր, զոնէ այդպէս էր եղած իր կեանքին վերջին 20-25 տարիներուն:

«Ես ձեռնասունն եմ, — կ'ըսէր, — Անիկդոս աղային», որուն քով աշխատած էր 1902-1904 տարիներուն:

Ու համով էր Օտեանի գինովութիւնը, գոնէ իր առաջին Փարին, ուր իր գիտակցութեան տէր՝ զուարթ ու չէն կը պահէր ամբողջ սեղանը. կը խօսէր անվերջ, չէնչող ու սրամիտ, ու կ'ողորէր շուրջինները:

Անտանելի էր սակայն իր գինովութեան երկրորդ Փաղը, ուր կը կորսնցնէր ինքզինքը. կ'ելլէր ոտքի, կը կանգնէր մէկ ոտքի վրայ, խմիչքին գաւաթը մատներուն վրայ դրած ու ձեռքը՝ հորիզոնական տարածած՝ օդին մէջ քանի մը անգամ տարուբերելէ յետոյ կուլ կուտար խմիչքը: Այս փորձը՝ ապացուցանելու համար, թէ դեռ գինով չէ, բայց այդ կ'ըլլար արդէն իր գինովութեան սկզբնաւորութիւնը, աղբանջանը: Անկէ անդին ա'լ կը կորսնցնէր իր գիտակցութիւնը:

Բայց անտանելի էր մանաւանդ Օտեանի ոչ-գինով վիճակը: Բողոքական պատուելի մը պէս լուրջ կը դառնար, կատակ ընելու եւ լսելու անտրամադիր, աւելի խոժոռ քան թէ լուրջ: Ու հոն է տարօրինակը, որ այս վիճակին մէջ կը գրէր իր ամենէն զուարթ էջերը:

Գինովութիւնը չէր ներշնչէր զինքը, ինչպէս կ'ըսէր: Բայց կ'երեւի ան էր, որ կը տրամադրէր զինքը յաջորդ օրուան համար: Ու արդարեւ քանի թեթեւ ըլլար իր գործածած խմիչքին ուժը՝ այնքան տկար կ'ըլլային իր սպազայ ներշնչումները: Հոն, ուր բարկ օդի էր իր սովորական խմիչքը, այդ երկրին մէջ կարծես աւելի ուժեղ կ'ըլլար իր իւմուրը:

Պուրէշ իր գրականութիւնը քիչ շունչ ունեցաւ: Վերագրե՞նք արդեօք մեր օդին, — ցուրիքային, — մեղմութեանը: (Հոս ցուրիքայի վարժուեցաւ ան, «որովհետեւ, կ'ըսէր, ամէն մարդ վարժուելու է իր բնական տեղւոյն ազգային ըմպելիին»):

* * *

Օտեան տէրվիչ էր առհասարակ: Երկար տարիներ զրկուած ընտանեկան խնամքէ, թափառական երկրէ երկիր, ան երբեք տեւական խաղաղութիւնը չճանչցաւ: Ատկէ իր տէրվիչի, պօհէմի հողերանութիւնը ու կենցաղը: Ատկէ թերեւս իր խմելու ծարաւը, զոր երբեք, երբեք չկրցաւ յագեցնել: Նոյն պօհէմը, նոյն մոլին մնաց երբ նոյնիսկ Սահմանադրութեան